ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-11/6 ծածկագրով ընթացակարգի արդյունքում 2013թ-ի դեկտեմբերի 26-ին կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/6-54-1 պայմանագրում 2014թ-ի փետրվարի 10-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայությունները մատուցվում են այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով 10.02.2014թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գրիգոր Ներսիսյանին:

Հեռախոս՝ 010-511-788:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ *«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

26.12.2013թ. կնքված N ԴԴ-ԾՀԾՁԲ-11/6-54-1 պայմանագրի

ք. Երևան 10.02.2014թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մանուկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 26.12.2013թ. կնքված N ԴԴ-ԾՀԾՁԲ-11/6-54-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. *Համաձայնագրի առարկան*

1. Կողմերը որոշեցին՝

1.1 հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի.

1.2 Պայմանագրի 4.2 կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եթե Արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:»:

2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են 2014 թվականի հունվարի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով Կողմերի ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 26բ-20
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1570003653770100
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Ղեկավարի պաշտոնակատար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Մանուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
26.12.2013թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/6-54-1 պայմանագրի
հիման վրա 10.02.2014թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Դատական ավտոմատացված համակարգի սպասարկում	**3 090 000**	**4 630 000**	**6 560 000**	**8 490 000**	**10 420 000**	**12 730 000**	**15 040 000**	**17 370 000**	**19 300 000**	**21 230 000**	**23 160 000**	**23 160 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀԿՀՀ՝ 02583241
ՀՀ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավարի պաշտոնակատար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 26բ-20
ՀԿՀՀ՝ 01555207
ՀՀ՝ 1570003653770100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան

(ստորագրություն)
Կ.Տ